ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Նոյեմբերի 26-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական նստաշրջան՝ նվիրված Հայաստանը Ռուսաստանի հետ միացման 140-ամյակին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. Ադայանը։

Նստաշրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը Ռուսաստանին միանալուց հետո» զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Ա. Համբարյանը։ Զեկուցողը հանգամանորեն կանգ առավ հայ ժողովրդի տնտեսական զարգացման գործում Ռուսաստանի հետ միանալու բարերար ազդեցության վրա։

— Շահական Պարսկաստանի դարավոր տիրապետության ժամանակ,— ասաց նա,— արգելակվում էր Արևելյան Հայաստանի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացումը։ Հայ ժողովուրդը զրկված էր գոյության ամենատարրական պայմանից՝ անձի ու գույքի ապահովությունից։ Հայաստանի միացումը Ռուսաստանին շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի կյանքում։ Երկաթուղային տրանսպորտը մուտք գործեց Հայաստան, որը խթան հանդիսացավ արդյունաբերության զարգացմանը, սկսեցին առաջադիմել գյուղատնտեսությունը, անասնապահությունը։ Հայաստանի արդյունաբերական արտադրանքը ինչպես մշակված, այնպես էլ թերամշակ վիճակում արտահանվում էր Ռուսաստանի զանազան շրջանները, նույնիսկ արտասահման։

— Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո,— նշեց Ա. Համբարյանը իր զեկուցման վերջում,— Հայաստանի տնտեսական զարգացումը առաջ գնաց չտեսնված տեմպերով։ Հայաստանը դարձավ ժամանակակից ինդուստրիալ հանրապետություն, գիտության ու կուլտուրայի օջախ։

Բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հովնանը «Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու նշանակությունը հայ մշակույթի զարգացման գործում» իր զեկուցման մեջ կանգ առավ հայ-ռուսական կապերի պատմության վրա։

— Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացումը բացառիկ նշանակություն է ունեցել հայ մշակույթի հետագա զարգացման համար,— ընդգծեց զեկուցողը։— Դա երևում է հայ ականավոր մտավորականների գործունեությունից։ Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը, Գարրիել Սունդուկյանը, Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանը և շատ հայ անվանի գրողներ ու մտավորականներ սերտ կապի մեջ են եղել ռուս ժողովրդի մտավորականության ականավոր ներկայացուցիչների հետ, հաղորդակից են դարձել նրանց գրական ժառանգությանը, ինչպես նաև ծանոթացրել են ռուս մտավորականությանը հայ ժողովրդի հնադարյան կուլտուրայի հետ։

Ջերնիշևսկու և մյուս հեղափոխական դեմոկրատների շրջանում աճեց, կազմավորվեց ու նրանց հետ ակտիվ գործեց XIX դարի հայ առաջավոր մտքի մեծագույն ներկայացուցիչ Միքայել Նալբանդյանը։

Անցյալ դարի 50-ական թվականներին Մոսկվայում սկսվում է հրատարակվել հայ լավագույն պարբերականներից մեկը՝ «Հյուսիսափայլը»՝ Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ, որը հայ մտավոր կյանքում բացառիկ դեր է կատարել։ Նրանից են ճառագայթվել Նազարյանցը, Նալբանդյանը, Շահազիզը, Բաֆֆին, Գ. Բարխուդարյանը, Հ. Քուչուկբեկյանը, Ք. Պատկանյանը, Մ. Մագաթյանը և հայ շատ ուրիշ հեղինակներ։

XIX դարի հայ նկարիչները իրենց կրթությունը ստացել են Պետերբուրգի և Մոսկվայի գեղարվեստական ուսումնարաններում, ռուս մեծ նկարիչների արվեստանոցներում։ Հովնաթանյանները, Սուրենյանցը, Թադևոսյանը, Բաշինջաղյանը, Աղաջանյանը, Սարյանը և վրձնի մյուս

անվանի վարպետները սովորել ու կատարելագործվել են Ռեպինի, Վասնեցովի, Սերովի, Սուրիկովի, Պոլենովի ղեկավարությամբ։

«Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և դրա արտացոլումը XIX դարի առաջին կեսի հայ գրականության մեջ» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Հակոբյանը։

—Ռուսաց պետության աջակցությամբ,—ասաց նա,—հայոց քաղաքական ազատագրության վերաբերյալ մեր նախնիները, դեռևս XVII դարում, հյուսել են լեգենդ, որի արձագանքները գտնում ենք մինչև այն և ուշ շրջանի մատենագրության մեջ։ Հնօրյա դիվանական վավերաթղթերը պերճախոս վկայություններ են տալիս այդ առթիվ, իսկ հուշագրություններն ու այլ կարգի նյութերը՝ հավերժացնում պատմական անցքեր, որոնցից արժե հիշել առանձնապես Կոմս Վալերիան Զուբովի կովկասյան արշավանքները՝ վերարտադրված Հարություն Արարատյանի կիսագեղարվեստական ինքնակենսագրության մեջ։

Այս ամենը,— շարունակում է զեկուցողը,— սակայն արծարծվող հարցի նախապատմությունն է։ Քիչ թե շատ կատարյալ գեղարվեստական գործեր հայոց քաղաքական ազատագրության համար ռուսների տված հույսերի առթիվ, հրապարակ են գալիս միայն XIX դարի սկզբներից։ Այն է՝ հայոց նոր գրականության ձևավորման խանձարուրային շրջանից։ Զեկուցողն այնուհետև վերլուծում է բազմաթիվ ստեղծագործություններ, որոնց մեջ արտացոլում են գտել ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների անցքերը։

Գիտական նստաշրջանին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ Ս. Թովմասյանը։

* * *

Նոյեմբերի 21-ին տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի և ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, պրոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կնունյանցի ծննդյան 90-ամյակին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ֆիլիալի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ղարիբջանյանը։

Բոգդան Կնունյանցի կյանքի և հեղափոխական գործունեության մասին կարդացվեցին մի շարք զեկուցումներ։

«Բոգդան Կնունյանցը որպես ականավոր պրոֆեսիոնալ հեղափոխական» զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի արևելագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Ինճիկյանը։ Նա նշեց, որ Բ. Կնունյանցը սոցիալիզմի հիմունքներին սկսեց հաղորդակից լինել դեռևս Շուշիի գիմնազիայում սովորելու տարիներին։ 1897 թ. Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող ժամանակ Կնունյանցը ընդունվում է ՌՍԴԲԿ-ի շարքերը։ Նա հանդիսանում է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի կազմակերպիչներից մեկը, իսկ 1902 թ. Ս. Շահումյանի, Ա. Զուրաբյանի, Ա. Խումարյանի, Մ. Մելիքյանի հետ միասին, մասնակցում է Թիֆլիսում հայ սոցիալ-դեմոկրատների միության ստեղծմանը և «Պրոլետարիատ» թերթի հրատարակմանը։ Զեկուցողը հանգամանորեն ցույց տվեց այն մեծ աշխատանքը, որ Կնունյանցը կատարել է կովկասյան սոցիալ-դեմոկրատների առաջին համագումարի նախապատրաստմանը, ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի ստեղծմանը, «Պրոլետարիատի կռիվ» թերթի հրատարակմանը։ Հայ մեծ հեղափոխականը հետագայում Անդրկովկասում ղեկավար կուսակցական գործունեությանը զուգընթաց, ընտրվում է կուսակցական ղեկավար օրգաններում՝ բոլշևիկների Մոսկվայի ու Պետերբուրգի կոմիտեների և ՌՍԴԲԿ ֆեդերատիվ խորհրդի կազմում, ՌՍԴԲԿ Կենտկոմի գործակալ և անդամ, Կենտկոմի Հյուսիսային բյուրոյի ագիտացիոն կոլեգիայի ղեկավար, 1905 թ. բանվորական դեպուտատների Պետերբուրգի առաջին խորհրդի դեպուտատ, խորհրդի գործկոմի անդամ և քարտուղար։

Բոգդան Կնունյանցը Վ. Ի. Լենինի, Ա. Վ. Լունաչարսկու, Մ. Մ. Լիտվինովի և ուրիշների հետ միասին մտնում է Երկրորդ ինտերնացիոնալի Շտուտգարտի կոնգրեսի բոլշևիկյան ֆրակցիայի մեջ, իսկ 1907 թ. նոյեմբերին նա մասնակցում է ՌՍԴԲԿ Հելսինգֆորսի չորրորդ կոնֆերանսի աշխատանքին։

Նստաշրջանում «Բոգդան Կնունյանցը պետության մասին» թեմայով զեկուցում կարդաց ՀԿԿ Եղեգնաձորի շրջկոմի քարտուղար Հ. Հովսեփյանը։ Նա նշեց, որ Կնունյանցը իր աշխատություններում խոսել է բացարձակ միապետության, սահմանադրական միապետության և բուրժուա-

կան հանրապետության էության մասին։ Աննկուն հեղափոխականը պաշտպանելով պետության մասին մարքս-լենինյան տեսությունը, Ռուսաստանի բանվոր դասակարգին կոչ էր անում ստեղծել պրոլետարիատի դիկտատուրա։

Նստաշրջանի վերջում հետաքրքիր հուշերով հանդես եկան հին բոլշևիկներ Գ. Մելիք-Գրիգորյանը և Ա. Հովհաննիսյանը։

* * *

Նոյեմբերի 11-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի, առողջապահության մինիստրության, Երևանի պետական համալսարանի, Մաշտոցի անվան մատենադարանի, բժշկական ինստիտուտի և գիտական բժշկական ընկերությունների միացյալ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ միջնադարյան բժշկության ականավոր ներկայացուցիչ Մխիթար Հերացու ծննդյան 850-ամյակին։

Նստաշրջանին մասնակցում էին հյուրեր՝ Մոսկվայից, Լենինգրադից, Օդեսայից, եղբայրական հանրապետությունների այլ մայրաքաղաքներից։

Գիտական նստաշրջանում կարդացվեցին մի շարք զեկուցումներ։ «Մխիթար Հերացու ժամանակաշրջանը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը։

«Միջնադարյան ականավոր հայ բժիշկ Մխիթար Հերացին» զեկուցման մեջ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Կծոյանը հանգամանորեն կանգ առավ Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» հռչակավոր աշխատության վրա, ցույց տալով նրա դերը հայ և համաշխարհային բժշկագիտության մեջ։

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Բ. Ալեքսանյանի՝ «Մխիթար Հերացու էպիդեմիոլոգիական հայացքները» զեկուցումը։ Մխիթար Հերացու և նրա ժամանակակիցների աշխատություններում տեղ գտած հիգիենայի մի քանի հարցերին էր նվիրված ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Ա. Հարությունյանի զեկուցումը։

Հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան նաև ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Ջալոյանը («Մխիթար Հերացու փիլիսոփայական հայացքները»), Մատենադարանի գիտական աշխատողներ Ս. Պ. Լալաֆարյանը («Մխիթար Հերացու ձեռագիր աշխատությունները»), Ա. Ս. Վարդանյանը («Աչքի անատոմիա ըստ Մխիթար Հերացու և Աբու Սահդի») և բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ս. Փարսադանյանը («Մխիթար Հերացին հայ և օտար բժշկական գրականության մեջ»)։